ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>

ՊՈԱԿ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՐՓԻ ՇԱՀԻՆՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ <<ԶՈԼԱՔԱՐԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ>>

ՄԱՐՏՈՒՆԻ 2022

# Բովանդակություն

Բովանդակություն ..... . . . . ..2

Ներածություն ..... . . . . 3

Գրական ակնարկ.....5

Գլուխ 1. Ակտիվ ուսուցման բովանդակությունը ..... . . . . 6

Գլուխ 2. Ուսուցման ակտիվ մեթոդներն ու հնարները պատմության դասա-

վանդման ընթացքում..... . . . . .....11

Հետազոտական մաս. . . . . 13

Գլուխ 2. 1Ակտիվ ուսումնառության մեթոդները իմ պրակտիկայում. . . . . 13

Հավելված. . . . . 16

Եզրակացություն. . . . . 21.

Գրականության ցանկ . . . . . 23

# Ներածություն

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն։ Այն ինչ մի ժամանակ թվում էր հավերժական ու անփոփոխ, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ՝ սխալ։ Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք սկսեցին գիտակցել, որ դասավանդման և ուսուցման ավանդական ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար։ Մշակվեցին ու ներդրվեցին այլընտրանքային նոր մոտեցումներ, որոնցում էապես վերանայվեցին ուսուցման խնդիրներն ու ուսուցչի դերը։ Ուսուցման գլխավոր նպատակը դարձավ սովորեցնել սովորել, ձևավորել գիտելիքները կիրառելու կարողություններ և հմտություններ, ստեղծագործական մտածողություն, նորը ստեղծելու կարողություն։

Ուսուցչակենտրոն ուսուցումից անցում կատարվեց աշակերտակենտրոն ուսուցման. ուսուցիչը ոչ թե պատրաստի գիտելիքներ պետք է տա սովորողին, այլ խթանի նրանց ինքնուրույն որոնմանը։ Ա. Դիստերվեգն ասել է, որ վատ ուսուցիչը ճշմարտությունը մատուցում է, լավը՝ սովորեցնում գտնել այն[1]։Այս դեպքում ուսուցումը ենթադրում է նոր մեթոդների կիրառում, որոնք կստեղծեն առողջ աշխատանքային տրամադրություն և ակտիվ մասնակցության միջավայր։ Դրանք պետք է նպաստեն նաև սովորողների կողմից թեմայի առավել մատչելի ընկալմանը, դասանյութի լիարժեք յուրացմանը, գիտելիքների ամրակայմանը, ինչպես նաև նրանց ներգրավվածությանը դասին։

Կրթության առջև դրված նոր խնդիրների ու հեռանկարային զարգացումների պահանջով ուսուցման գործընթացում ստեղծվել են բազմաթիվ մեթոդներ, որոնց նպատակը ակտիվ ուսուցում կազմակերպելն է։

Ո՞րոնք են այն մեթոդները, որոնք այսօր անհրաժեշտ են ուսուցչին արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար։ Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող։ Այն կապված է բազմաթիվ խնդիրների և

[1] Ա. Դիստերվեգ,Մանկավարժական ընտիր երկեր, Ե. , 1963։

նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով։

Ի դեպ, ուսուցման նորարարական ձևերի ներմուծումը բնավ չի ենթադրում ավանդականի մերժում։ Պարզապես ավանդական ուսուցման նպատակները (որոշակի գիտելիքների հանրագումար հաղորդելը, դրանք առավել կիրառելի դարձնելը) ընդամենը վերածվում են նորարարական ուսուցման նպատակներին հասնելու միջոցների։ Մանկավարժության մեջ չկա մեթոդների և հնարների հակադրում։ Բոլոր եղանակներն էլ ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել, իսկ ընտրությունը կատարում է ուսուցիչը։

Հետազոտության նպատակն է պարզաբանել ակտիվ ուսուցման բովանդակությունը, մեթոդների և հնարների դերը պատմության ուսուցման գործընթացում և հասկանալ դրա հետ կապված մի շարք խնդիրներ.

- ի՞նչ է ակտիվ ուսուցումը
- ուսուցչի խնդիրները ակտիվ մեթոդների ու հնարների կիրառման գործում
- ուսուցման ինչ՞ ակտիվ մեթոդներ ու հնարներ են կիրառվում պատմության դասավանդման ընթացքում, և որքանո՞վ են դրանք արդյունավետ։

# Գրական ակնարկ

Այսօր կրթական համակարգում տեղի են ունենում շատ փոփոխություններ, և այդ փոփոխություններից անմասն չի մնում նար դասավանդման մեթոդիկան: Ինչպես պատմության ,այնպես էլ յուրաքանչյուր առարկայի դասավանդման գործում կարևոր է մեթոդների կիրառում:

Կիրառվում են բազմաթիվ մեթոդներ, որոնց նպատակը մեկն է ակտիվ ուսուցման միջոցով հասնել նպատակին:

Թեմայում ներկայացվել է մի քանի մեթոդների կիրառում՝ դասապրոցեսի ընթացքում: Իհարկե ներկայացրել եմ ակտիվ ուսուցման բովանդակությունը, հանգամանորեն անդրադարձ եմ կատարել ուսուցման ակտիվ մեթոդներին ու հնարներին պատմության դասավանդման ընթացքում: Եվ իհարկե կարևոր է նաև այն հանգամանքը, որ պատմության դասավանդման և ուսուցման մեթոդների մեջ կարևոր դեր ունի ուսուցչի կենդանի , արտահայտիչ խոսքը և դասի մատուցման ձևը, որոնք արտահայտվում են տարբեր ձևերով՝ պատմել, հարց ու պատասխան, զրույց, պատմական փաստաթղթերի բարձրաձայն ընթերցում, արտասանություն և այլն: Բոլոր մեթոդների, հնարների հիմքում ընկած է աշակերտի ինքնուրույն ուսումնական գործունեությունը,նրա անմիջական և ակտիվ մասնակցությունը:

## ԳԼՈՒԽ 1.Ակտիվ ուսուցման բովանդակությունը

« Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրականկրթական մեթոդեր: Այն պահից սկսած, երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը»

Բ. Ֆ.Սքիներ

ՈՒսուցման գործընթացը իր մեջ ներառում է 3 կարևոր խնդիր՝ ինչ՞ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչու՞ սովորեցնել (կրթության նպատակներ), և ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա):

Կրթության բովանդակությունը (ի՞նչ սովորեցնել) մատուցելու և կրթության նպատակները (ինչու՞ սովորեցնել) իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր: ՈՒսուցման մեթոդը ուսուցչի և սովորողի հետևողական փոխկապակցված գործողությունների համակարգն է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը:

Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր բաժանվում են 2 խմբի՝ ավանդական կամ պասիվ մեթոդներ և նոր կամ ժամանակակից մեթոդներ:

Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Այստեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին:

Ժամանակակից մեթոդները բաժանվում են 2 խմբի՝ ակտիվ և ինտերակտիվ կամ համագործակցային:

Ակտիվ մեթոդներով ուսուցումը սովորողների և դասավանդողի միջև այնպիսի փոխգործունեությունն է, որտեղ երկուսն էլ փոխազդում են միմյանց վրա կրթական

գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Իսկ համագործակցային մեթոդների դեպքում սովորողները ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման գործընթացում գերակայում է սովորողների դերը: Սովորողներն ակտիվ են, նրանք հանդես են գալիս որպես դասի լիիրավ մասնակիցներ, իսկ ուսուցիչը ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: Հետևաբար, համագործակցային դասերի հիմնական բաղադրիչներն են համագործակցային մեթոդներն ու հնարները, որոնք իրականացվում են սովորողների կողմից հիմնականում նոր նյութի յուրացման փուլում: Համագործակցային մոտեցումներն անհրաժեշտ են սովորողներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր և մասնակցային դարձնելու համար: Համագործակցային մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր[2]:




Գծապատկեր 1. Պասիվ ուսուցում




Գծապատկեր 2. Ակտիվ ուսուցում




Գծապատկեր 3. Ինտերակտիվ ուսուցում

[2] https://www.slideshare.net/torosian/ss-9876301

Ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը: Այս ուսուցման հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես սովորողի և ուսուցչի, այնպես էլ իրենց սովորողների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում են հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը՝ զարգանում է սովորողների խոսքը: Վերջիններս ներգրավվում են նաև ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծվում է անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիր լուծելու համար: Ակտիվ մեթոդները կիրառելի են ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողների մտածողությունն ու ճանաչողական ակտիվությունը:Ակտիվ մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մոդելների, գծագրերի, ֆիլմերի, սահիկաշարերի,հետաքրքիր նյութերի ցուցադրություններ:

Այսպիսով, ուսուցման ակտիվ մեթոդները նպատակ ունեն ապահովելու կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից՝

- սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում
  - ինքնագործունեության խթանում
- ճանաչողական ունակությունների զարգացում. խոսք, հիշողություն, մտածողություն
- ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում
- ստեղծագործական մտածելակերպի զարգացում
- սովորողի անհատական յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում
- ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում
- ուսումնական դրական խթանի ձևավորում[3]

[3]Ս. Խաչատրյան ,Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը,Գյումրի. 2006:

Ուսուցման գործընթացի կազմակերպման նպատակով ստեղծվել են բազմաթիվ մեթոդներ ու հնարներ։ Մանկավարժության մեջ չկա մեթոդների և հնարների հակադրում։ Բոլորն էլ ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել։ Ուսուցիչն է ընտրում ի՞նչ մեթոդներ կիրառել իր դասին, նա ազատ է այդ հարցում, նա է գտնում և մշակում այն ձևերն ու հնարները, որոնք տանում են դեպի դասի նպատակների արդյունավետ իրականացում։ Սակայն մեթոդների ընտրությունը ինքնանպատակ չի կարող լինել։ Յուրաքանչյուր դաս և դասարան եզակի է ու անկրկնելի։ Մի դասարանում գործող մեթոդը մեկ այլ դասարանում կարող է չաշխատել։ Ուրեմն ուսուցչի համար կարևոր է նաև մեթոդի ճիշտ ընտրությունը, ինչպես նաև նրա հմտությունը սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին։ Մեթոդ կիրառելիս ուսուցչի բուն նպատակը պետք է լինի ոչ թե պարզապես դասն աշխուժացնելը կամ մանկավարժական վարպետությամբ փայլելը, այլ առաջին հերթին մեթոդական ողջ զինանոցի կիրառմամբ ուսուցման նպատակների իրականացմանը հասնելը։ Այլ խոսքով ասած, պետք է ոչ թե տեխնիկա ցուցադրել, այլ հասնել դասի նախապես ծրագրված նպատակին։ Եթե կիրառված մեթոդները չեն տանում դեպի այդ նպատակը, ուրեմն պետք է փոխել կամ կատարելագործել դրանք։ Երբ մեթոդները արդյունավետ են, բայց դրանք պարզորոշ վկայում են, որ առաջադրված նպատակը տվյալ տարիքին անհամապատասխանության կամ ուսումնառության այդ պայմանների արդյունքում իրատեսական չէ, ուրեմն պետք է վերանայել նպատակը[4]։

Ուսուցիչը, հաշվի առնելով սովորողների ճանաչողական կարողությունները, պետք է ընտրի դասավանդման այն մեթոդներն ու հնարները, որոնց կիրառումը հետապնդում է դասի արդյունավետությունը բարձրացնելու, գիտելիքների հաղորդումը և սովորողների կողմից դրանց յուրացումը դյուրին դարձնելու նպատակ՝ ապահովելով աշակերտակենտրոն ուսուցում։

Որպեսզի ուսուցիչը կարողանա հասնել իր առջև դրված նպատակներին անհրաժեշտ է մեթոդների ճիշտ ընտրություն։ Իսկ դրա համար նա պետք է ունենա մասնագիտական պատրաստվածություն, մանկավարժական մեթոդների փայլուն

[4] Վ. Գյուլազյան, Լ. Առուշանյան, Մ. Գասպարյան, Ուսուցչի ուղեցույց տետր,Ե. , 2009։

իմացություն, այդ մեթոդներն ու հնարները կիրառելու մեծ վարպետություն, ճկունություն և ստեղծագործական մտածողություն։

## Գլուխ 2. Ուսուցման ակտիվ մեթոդներն ու հնարները պատմության դասավանդման ընթացքում

Պատմության դասավանդման ընթացքում կիրառվող գործուն մեթոդներն են՝

1. Խոսքային մեթոդներ՝ կիրառվում են ուսուցման բոլոր փուլերում: Այդպիսի մեթոդներ են զրույցը, հարց ու պատասխանը, բանավեճը, ուղղորդված ընթերցանությունը, պատմելը, փոխադարձ ուսուցումը:
2. Զննական մեթոդներ այն մեթոդներն են, որոնց միջոցով սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացումը իրականացվում է դիտազննական պարագաների և տեխնիկական միջոցներով: Դրանք են ցուցադրությունները, իրական պատմական հուշարձանները, հիշարժան վայրերը, հնագիտական գտածոները, նյութական մնացորդները, ուսումնական քարտեզները, նկարները, գծագրերը և այլն: Դասի ժամանակ համակարգչային տեխնիկայի կիրառումը մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը: Պատմական դեպքերի ու փաստերի ցուցադրումը ( տեսանյութեր, ֆիլմեր, սահիկաշար և այլն) ավելի հետաքրքիր է դարձնում դասը, իսկ դրանք քննարկելը ապահովում է ակտիվություն ու մասնակցություն:
3. Գործնական մեթոդներ՝կազմակերպվում են որոշ թեմաներ ուսումնասիրելուց հետո: Դրանք կրում են ընդհանրացնող բնույթ: Տեսակներն են գրաֆիկական վարժությունները, սկզբնաղբյուրների, փաստաթղթերի, գծակարգերի, ցուցապաստառների, քարտեզների հետ աշխատանքը և այլն:
4. Ինդուկտիվ մեթոդներ օգնում են բացահայտել ուսումնասիրվող նյութի բովանդակության տրամաբանությունը, ինչպես նաև նրա դինամիկան: Դա կատարվում է մասնավորից դեպի ընդհանուրը տանող ուղիով:
5. Դեդուկտիվ մեթոդներ զարգացնում է սովորողի վերացական մտածողությունը, արագացնում է ուսումնասիրության ընթացքը: Տեսական, գործնական առաջադրանքներ կատարելիս օգնում է հայտնաբերել պատճառահետևանքային կապեր: Բացահայտում է նյութի բովանդակության տրամաբանությունը՝ ընդհանուրից դեպի մասնավոր տանող ուղիով:

6. Պրոբլեմային ուսուցման մեթոդներ՝ենթադրում են պրոբլեմի առաջադրում, ձևակերպում և լուծում։ Զարգացնում է սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեությունը։
7. Քննադատական մտածողության մեթոդներ՝ մտածողության այս տեսակին բնորոշ է որոշումներ ընդունելը, եզրակացություններ ձևակերպելը, փաստերն ու երևույթները գնահատելը։
8. Համագործակցային ուսուցման մեթոդներ՝ սովորողները համագործակցային միջավայրում են կառուցում իրենց հմտությունները՝ խոսելու, միմյանց բացատրելու, բանակցելու, վիճարկելու, հարցեր տալու միջոցով[5]։

Պատմության դասավանդման և ուսուցման մեթոդների մեջ կարևոր դեր ունեն ուսուցչի կենդանի , արտահայտիչ խոսքը և դասի մատուցման ձևը, որոնք արտահայտվում են տարբեր ձևերով՝ պատմել, հարց ու պատասխան, զրույց, պատմական փաստաթղթերի բարձրաձայն ընթերցում, արտասանություն և այլն։

Մեթոդների կիրառման ժամանակ օգտագործում են հնարներ։ Թեև հնարը սովորաբար անկախ կիրառություն ունի, բայց հաճախ բնութագրվում է որպես մեթոդի տարր, բաղադրիչ, մեթոդի իրականացման քայլ կամ արտահայտաձև։ Բոլոր մեթոդների, հնարների հիմքում ընկած է աշակերտի իմքնուրույն ուսումնական գործունեությունը, նրա անմիջական և ակտիվ մասնակցությունը[6]։

[5] Հ. Ղևոնդյան,Պատմության դասավանդման մեթոդները,Ե. , 2001:

[6] Հայագիտությունը դպրոցում գիտամեթոդական-վերլուծական հանդես, N2, Ե. , 2016:

Հետազոտական մաս

Գլուխ 2.1 Ակտիվ ուսումնառության մեթոդները իմ պրակտիկայում

<< Պատմիր ինձ՝ և ես այն կմոռանամ, ցույց տուր և ես
կհիշեմ, ինձ հետ կատարիր՝ և ես կսովորեմ>>:
Չինական առած

Ստորև կներկայացնեմ պատմության դասավանդման ժամանակ իմ կողմից ավելի հաճախ կիրառված մի քանի ակտիվ մեթոդներ ու հնարներ և իմ դիտարկումները:

Տարբեր մեթոդների և հնարների օգտագործումն ու համադրումը դասի տարբեր փուլերում հանգեցնում են դասապրոցեսին աշակերտների ակտիվ մասնակցությանը և ներգրավվածությանը: Կարևորում եմ դասի սկիզբը, քանի որ եթե հաջողվում է առաջին րոպեներին գրավել սովորողների հետաքրքրությունը, ապա դա նպաստում է դասի արդյունավետ ընթացքին, և մեծանում է նպատակներին հասնելու հավանականությունը: ԽԻԿ համակարգով ուսուցման կազմակերպման խթանման փուլում կատարում եմ <<Պրիզմա>> վարժությունը: Այն կարելի է կիրառել ցանկացած թեմա ուսուցանելիս, և մեկնաբառ կարող է լինել հիմնական հասկացությունը, թեման, միտքը, որը ենթակա է ուսումնասիրության: Օրինակ՝ 6-րդ դասարանում <<Հայկական լեռնաշխարհը՝ հայերի հայրենիք>> թեման ուսուցանելիս որպես սկզբնաբառ վերցնում եմ <<հայրենիք>> հասկացությունը կամ <<Հայերի ծագման մասին պատմող ավանդազրույցները>> դասից՝ <<առասպել>> հասկացությունը: Շատ հետաքրքիր մտքեր են ձևակերպվում, երբ աշակերտները մեկնաբառը կապում են վերջնաբառի հետ: Խթանման փուլում կազմակերպում եմ նաև <<Մտքերի տարափ>> վարժությունը, երբ սովորողները թվարկում են ուսումնասիրվող նյութի հետ առնչվող բառեր և գաղափարներ՝օրինակ՝ պատերազմ, մշակույթ, հայրենիք, պետություն հասկա-ցություններով:Դասը հաճախ սկսում եմ հարցերով, զրույցով, հետաքրքրություն առաջացնող որևէ մտքով, աֆորիզմով, նշանավոր մարդու կամ թևավոր խոսքերով, անավարտ նախադասություններով: Նպատակահարմար է նաև օգտագործել ԳՈՒՍ մեթոդը՝ լրացնելով նրա առաջին և երկրորդ սյունակները: 7-րդ դասարանում <<Քրիստոնեության ընդունումը Հայաստանում>> թեման ուսուցանելիս

խթանման փուլում աշակերտները կարողանում են լրացնել նրա <<գիտեմ>> և << ուզում եմ իմանալ>> սյունակները՝ <<սովորեցի>> սյունակը թողնելով իմաստի ընկալաման փուլին: Մեթոդները թույլ են տալիս աշակերտներին կենտրոնանալ, ակտիվանալ, ներգրավվել, մտածել, քննարկել և խթանում են հիշողությունը:

Կարևոր է ճիշտ կազմակերպել աշխատանքը իմաստի ընկալման փուլում: Այն ավելի մասնակցային է դառնում, երբ իրականացվում է համագործակցային ՝ փոքր խմբերով աշխատանքը, որը էապես մեծացնում է աշակերտների ակտիվութունը դասապրոցեսում: Խմբի յուրաքանչյուր անդամ ստանում է նույն նյութի վերաբերյալ անհատական աշխատանք, որն ավարտելուց հետո պարտավոր են իրար հետ քննարկել իրենց աշխատանքները ՝ սկզբում խմբի ներսում, ապա ներկայացնելով ամբողջ դասարանին: Խմբի աշակերտները պետք է հասկանան, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից՝ ընդհանուր նպատակին հասնելու համար: Օրինակ՝ 7-րդ դասարանում <<Արշակ Երկրորդի քաղաքականությունը>> ուսուցանելիս դասարանը բաժանել եմ 4 հոգանոց փոքր խմբերի և կիրառել <<կենտրոններով աշխատանք>> մեթոդը: Խմբի մի անդամը կարդաց նյութը և վեր հանեց հիմնական մտքերը: Երկրորդ աշակերտը կարդաց նյութը և վերլուծեց դասին կից Փ. Բուզանդի պատմությունից հատվածը, երրորդը կազմեց պաստառ, չորրորդ աշակերտը բացատրեց նոր անուններն ու հասկացությունները: Վերջում խմբերը ներկայացրին իրենց աշխատանքները ամբողջ դասարանին:

Հաճախ օգտագործում եմ <<Խաթարված հերթականություն>> մեթոդը, և սովորողները իրենք են վեր հանում այս կամ այն իրադարձության պատճառահետևանքային կապերը, զարգանում է նրանց տրամաբանությունը. 9-րդ դասարանում՝ <<Մայիսյան ապստամբությունը>>, <<Փետրվարյան ապստամբությունը>>,8-րդ դասարանում՝ <<Առաջին համաշխարհային պատերազմը>> և այլն:

Պատմության դասաժամերին սովորողներին ակտիվացնում են նաև բանավեճերը այս կամ այն հարցի վերաբերյալ. օրինակ՝ Տիգրան Մեծի և Լուկուլլոսի միջև ստորագրված Արտաշատի պայմանագիրը (6-րդ դաս.), 1920թ. Ալեքսանդրապոլի

պայմանագրի ստորագրումը (9-րդ դաս. ), հայդուկային շարժման նշանակությունը (8--րդ դաս. ) և այլն։

Գծակարգերից կիրառում եմ n-աձև աղյուսակը խնդրի 2 կողմերը համեմատելու համար. օրինակ՝ Սան-Ստեֆանոյի պայմանագրի անորոշություններն ու դրական կողմերը, Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի հայերին վերաբերող հոդվածների նմանություններն ու տարբերությունները, Պապ թագավորի ներքին և արտաքին քաղաքականությունը, Բագրատունյաց Հայաստանի անկախության վերականգնման հերքին և արտաքին նախադրյալները և այլն։

Վենի դիագրամը կիրառում եմ երևույթները, կերպարները, իրադարձությունները համեմատելու, նմանություններն ու տարբերությունները վերհանելու համար։ Օրինակ՝ սովորողները այս մեթոդով համեմատում են Հյուսիսային և Հարավային ծրագրերը, հոտն ու տոհմը, Վիեննայի և Փարիզի խորհրդաժողովները, նախնադարի փուլերը և այլն։

<<3 բանալի և 1 կողպեք>> մեթոդը, <<m-աձև աղյուսակ>>, <<5 րոպեանոց շարադրություն>>, << Քառաբաժան>>, <<Կիսատ նախադասություն>>, << Հնգյակ>> մեթոդներն ու հնարները արդյունավետ են և կիրառելի դասի իմաստի ընկալման և կշռադատման փուլերում։

Մեթոդների կիարառման արդյունքում ստեղծվել է աշխատանքային մթնոլորտ, աշակերտնեևը ներգրավվել են ուսուցման գործընթացին։

Աշխատանքիս կցում եմ իմ կողմից կազմված 2 դասի պլան, որտեղ կիրառել եմ մեթոդներ ու հնարներ։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա՝ Հայոց պատմություն

Ամսաթիվ՝ 18. 10. 2021թ.

Դասարան՝ 9-րդ

Թեմա՝ Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում։ Սևրի պայմանագիրը

Դասի նպատակները

- ձևավորել գիտելիքներ Առաջին աշխարհամարտից հետո ստեղծված միջազգային իրավիճակի, Սևրի պայմանագրի, հայկական հարցի արծարծման և լուծման հետ կապված իրադարձությունների մասին
- վերլուծել հայկական հարցի լուծման հարցում ձեռքբերած արդյունքներն ու հետևանքները
- գնահատել պատմությունից դասեր քաղելու և դրանք ապագա սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունն ու կարևորությունը
- ձևավորել և զարգացնել վերլուծական, քննադատական, համագործակցային , հետազոտական կարողություններ և հմտություններ

Ակնկալվող վերջնարդյունքները.

Սովորողները պետք է.

- իմանան Փարիզի խորհրդաժողովում հայկական պատվիրակությունների , նրանց գործունեության, Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության հռչակման, Սևրի պայմանագրի հայերին վերաբերող հոդվածների մասին
- կարողանան վերլուծել Սևրի պայմանագրի հայերին վերաբերող հոդվածները

- գնահատեն Սևրի պայմանագիրը

բացատրեն Սևրի պայմանագրի թղթի վրա մնալու բուն պատճառներն ու հայ ժողովրդի իրավունքների ոտնահարումը՝ մեծ տերությունների շահերի առաջնայնության պայմաններում Սովորողների մոտ պետք է ձևավորվեն համագործակցային, ինքնուրույն աշխատելու, սեփական դիրքորոշում ունենալու կարողություններ և հմտություններ։

Միջառարկայական կապեր՝ համաշխարհային պատմություն, աշխարհագրություն։
Անհրաժեշտ նյութեր՝ դասագիրք, ատլաս, տետրեր, նկարներ, A4 թղթեր։
Մեթոդներ և հնարներ՝ պրիզմա, աշխատանք փաստաթղթի հետ հետ, հարց ու պա-տասխան, խմբային աշխատանք, քննարկում, կիսատ նախադասություններ։
Դասի տիպը՝ նոր նյութի ուսուցում ԽԻԿ համակարգով, տևողությունը՝45ր. :

Ուսումնական գործունեություն Կազմակերպչական մաս՝ սովորողների հաշվառում 2-3րԽթանում՝ 5-7ր
<< 1920 թ. օգոստոսի 10. կյանքիս երջանիկ օրն է այս։ 30 տարվա պայքարս, բողոքս, տառապանքս ու հույսերս պսակվեցին փառավոր հաջողությամբ։ Լուծվեց հայկական հարցը, թուրքական դաշնագիր ստորագրվեց և հռչակվեց Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստանը Սևրի սրահում>>։

Դասը սկսվում է Ավետիս Ահարոնյանի հետևյալ խոսքերով , որը հնչում է ուսուցչի շուրթերից։ Ապա գրատախտակին կազմվում է պրիզմա՝ <<հայկական հարց>> հասկացությամբ։ Կազմակերպվում է աշխատանքի ամփոփում։

Իմաստի ընկալման փուլ՝ 25 ր.

Դասարանը բաժանվում է 4 խմբերի՝ ըստ ենթավերնագրերի
Առաջին խումբ- << Հայկական պատվիրակությունները Փարիզի խորհրդաժողովում>>
Երկրորդ խումբ-<< Միացյալ Հայաստանի հռչակումը>>
Երրորդ խումբ-<< Հայկական հարցը Սան-Ռեմոյի խորհրդաժողովում>>
Չորրորդ խումբ- <<Սևրի պայմանագիրը>>

Խմբի ներսում կատարվում է աշխատանքի բաժանում։ Սովորողներից մեկը պետք է կարդա ենթավերնագիրը և այն ներկայացնի խմբին։ Մյուս աշակերտը պետք է կարդա դասին կցված փաստաթուղթը և լրացուցիչ տեղեկություններ հաղորդի, երրորդ սովորողը պաստառ է պատրաստում նյութի վերաբերյալ, իսկ խմբի վերջին անդամը դուրս է հանում տեքստի նոր անուններն ու հասկացությունները և բացատրում։Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները։ Կատարվում է անդրադարձ `<<ինչ սովորեցին>> ու անցնում հաջոջդ փուլին։

Կշռադատման փուլ ` 10 ր.

Կիսատ նախադասություններ, սովորողներին հանձնարարվում է ավարտել

- Ես այսօր սովորեցի. . .

- Ինձ զարմացրեց. . .

- ինձ հետաքրքրեց. . .

- մի բան, որ չհասկացա. . .

- մի բան, որ կուզենայի ավելին իմանալ. . .

- այս դասից հետո ես զգում եմ. . .

Կատարել միավորային գնահատում։
Տնային աշխատանք՝ լրացուցիչ տեղեկություններ Սևրի պայմանագրի բովանդակության մասին։

Առարկա՝Հայոց պատմություն

Ամսաթիվ՝05.09.2021թ.

Դասարան՝6-րդ

Թեմա՝Հայկական լեռնաշխարհ

Դասի նպատակը՝

- Իմանալ Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը
- Իմանալ Հայկական լեռնաշխարհի բնության առանձնահատկությունները լեռները, լեռնաշղթաները,գետերը և լճերը

Ակնկալվող վերջնարդյունքները

Սովորողները պետք է՝

- Կարողանան ձևավորել և ամրապնդել հայրենասիրություն,հարգանք արժեքների և սեփական հայրենիքի նկատմամբ
- Կարևորեն և արժևորեն պատմակա Հյաստանի դերը

Անհրաժեշտ պարագաներ՝դասագիրք,տետր, գունավոր մատիտներ, ուրվագծային քարտեզներ,պատմության ատլաս,մեծ էկրան, առկայության դեպքում ցանկալի է նաև պրոեկտոր

Հիմնական հասկացություններ՝Արմենիա, Սոմխեթի,<<լեռնային կղզի>>,միջնաշխարհ,Փոքրասիական բարձրավանդակ, Իրանական սարահարթ։

Դասի ընթացքը

Խթանման փուլ.այս փուլին կարելի է հատկացնել 5 րոպե, որի ընթացքում ուսուցչի հանձնարարությամբ սովորողները կատարում են <<մտագրոհ>> վարժությունը,որի նպատակն է վեր հանել ունեցած գիտելիքները,թարմացնել երեխաների հիշողությունը։Այնուհետև ուսուցչի կողմից կատարվում է <<կարճ դասախոսություն>> և <<զննականություն>> մեթոդները,որի նպատակն է

որոշակի գիտելիքների մատուցում։

Իմաստի ընկալման փուլ.այս փուլին հատկացվում է 25-30րոպե, որի ընթացքում ուսուցիչը համակցված ու մատչելի լեզվով սովորողներին է ներկայացնում դասանյութի հիմնական գաղափարը,մերթ ընդ մերթ աշխարհագրական օբյեկտները ցուցադրելով քարտեզի վրա։

Այս փուլում կարելի է կատարել <<մտքերի քարտեզագրում>>մեթոդը։

Այնուհետև մեծ էկրանի օգնությամբ, որի վրա պատկերված է Հայակակն լեռնաշխարհը,սովորողները լրացնում են ուրվագծային քարտեզը,իհարկե, աշխատանքը թերի մնալու դեպքում կարելի է հանձնարարել որպես տնային հանձնարարություն։

Կշռադատման փուլ.այս փուլին կարելի է հատկացնել 5 րոպե, հարց ու պատասխանի միջոցով ամրապնդել ձեռք բերված գիտելիքները,կարելի է կատարել անդրադարձ;

Դասի վերջում հանձնարարել տնային հանձնարարություն։

# Եզրակացություն

Ակտիվ ուսուցումը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողն ու սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում: Սովորողները ոչ թե պասիվ ունկնդիրներ են,այլ դասի ակտիվ մասնակիցներ և ինքնուրույն գիտելիք ձեռքբերողներ: Ակտիվ ուսուցման դեպքում նրանք ձեռք են բերում ոչ միայն գիտելիքներ, այլ նաև դրանք կիրառելու, մտածելու, վերլուծելու, ինքնուրույն խնդիրներ լուծելու, համագործակցելու և մի շարք այլ կարողություններ ու հմտություններ: Ակտիվ ուսուցումը իրականացվում է մեթոդների և հնարների միջոցով: Դրանք նախապես պլանավորված նպատակին հասնելու միջոցներ և գործիքներ են ուսումնական միջավայրում:

Յուրաքանչյուր դաս ենթադրում է ստեղծագործական մեծ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն մեթոդներն ու հնարները, որոնք տանում են դեպի դասի նպատակների արդյունավետ իրականացում: Թերևս, ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է, չափորոշչային պահանջներին համապատասխանեցնելը, մեթոդների և հնարների ճիշտ ընտրությունը, դրանք իրականացնելն ու ժամանակի մեջ տեղավորվելը: Ուսուցչի համար կարևոր է ոչ միայն մասնագիտական տեսական գիտելիքներ ունենալը, այլև դրանք կիրառելու հմտությունները: Կարևոր է նաև, որ ուսուցիչը անընդհատ զբաղվի ինքնակրթությամբ՝ հարստացնելու համար մեթոդների իր զինանոցը և ցուցաբերի ստեղծագործական մոտեցում այդ հարցում:

Զրույց, պրիզմա, մտագրոհ, բանավեճ, ԳՈՒՍ, վենի դիագրամ, դերային խաղեր, T-աձ, m-աձև, n-աձև աղյուսակներ, խաթարված հերթականություն, խմբային աշխատանք, 3 բանալի և 1 կողպեք, ձնագնդիկ, աշխատանք սկզբնաղբյուրով, քառաբաժան, 5 բոպեանոց շարադրություն, պատմական հիշողության օղակներ, հասկացությունների աղյուսակ, հնգյակ և այլն՝ իմ կողմից պատմության դասաժամերին դասի տարբեր փուլերում հաճախ օգտագործված մեթոդներն ու հնարներն են: Ելնելով իմ դիտարկումներից՝ դրանք արդյունավետ են, քանզի ստեղծում են աշխատանքային մթնոլորտ, դասը դարձնում են մասնակցային ու հետաքրքիր, մոտիվացնում են սովորողներին և նրանց ներգրավում ուսուցման գործընթացի մեջ:

Մեթոդների կիրառումը նպաստեց առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը։Իրականացվում է երկխոսություն, երկխոսության ընթացքում զարգանում են հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը՝ զարգանում է աշակերտների խոսքը։ Վերջիններս ներգրավվում են նաև ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծվում է անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիր լուծելու համար։ Այսպիսով այս մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների մտածողությունն ու ճանաչողական ակտիվությունը զարգացնելուն։ Այս մեթոդները բարձրացնում են սովորողների ճանաչողական ակտիվությունը,զարգացնում են հիշողությունը, խոսքը, մտածողությունը,ստեղծագործական մտածելակերպը և այլն։

# Գրականության ցանկ


1. Ս. Խաչատրյան, «Ուսուցման արդյունավետ հնարներ», Երևան 2020։
2. Վ. Գյուլազյան, Լ. Առուշանյան, Մ. Գասպարյան, «Ուսուցչի ուղեցույց տետր», Երևան 2009։
3. Ս. Խաչատրյան, «Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը», Գյումրի 2006։
4. Հ. Ղևոնդյան, «Պատմության դասավանդման մեթոդներ», Երևան 2001։
5. «Հայագիտությունը դպրոցում գիտամեթոդական վերլուծական հանդես»,2016, N2:
6. https://www.slideshare.net/torosian/ss-9876301